

Հայաստանի ազգային գրադարանի արվեստի ընթերցասրահը այս չորեքշաբթի էլ մարդաշատ էր: Էկրանին որմնանկարներով զարդարված միջնաբերդերի պալատական դահլիճները, սյունազարդ բակերը, տաճարները, հանդիսավոր և այլ բնույթի սենյակներն էին, սեղանին՝ թեմային վերաբերող գրականություն, պատկերազարդ ալբոմներ: Վանի թագավորության որմնանկարչության թեմայով զեկույցով ներկայացավ Արվեստի գրականության եւ ոչ գրքային հրատարակությունների բաժնի աշխատակից Գայանե Պողոսյանը:



Առաջավոր Ասիայի հզորագույն պետություն համարվող Վանի թագավորությունում զարգացած էր դպրությունը, գրականությունը, ճարտարապետությունը: Այդ ժամանակաշրջանի քանդակագործական արվեստի բազմաթիվ նմուշներ այժմ ցուցադրվում են թե Հայաստանում, թե աշխարհի բազմաթիվ թանգարաններում:

Վանի թագավորությունում զարգացած է եղել նաև որմնանկարչությունը:

«Ուրարտական որմնանկարները մոռումենտալ արվեստի հնագույն ստեղծագործություններից են: Որմնանկարները եղել են զարդադեկորատիվ և թեմատիկ՝ աշխարհիկ, մարտական և կրոնապաշտամունքային բովանդակության: Ինչպես բնորոշ է Հին Արևելքի արվեստին,



թեմատիկ շարքերը պատկերել են պալատական տոնակատարություն, խնջույք, հաղթարշավ, կրոն, ծիսակատարություն, որսի, խաղաղ կյանքի տեսարաններ: Էրեբունիի հանդիսասրահի կենտրոնում պատկերված է եղել թագադրության տեսարան, հզոր առյուծի վրա կանգնած Խալդի աստվածը արքայական իշխանության խորհրդանշանն է հանձնում, հավանաբար, Արգիշտի Ա արքային: Արքայի և աստծո պատկերման մեջ նմանություն կա, սակայն, ի

տարբերություն ասորեստանյան արվեստի, ուրարտական որմնանկարներում, հարթաքանդակներում, դրվագապատկերներում աստվածների դիմագծերը զերծ են պատկերազրական միօրինակումից. դա հատկապես նշմարելի է Կարմիր բլուրում գտնված բրոնզե գոտու դրվագապատկերներում», -նշեց իր խոսքում Գայանե Պողոսյանը: